

Մեքենաները խորագրուած քերթուածը մասնաւորապէս կը յիշեցնէ Վեռհառնի *Les forces tentaculaires*ին¹⁸ վերլուծական կորովն ու *Առկայծ ճրագը*՝ Մէթեոլինկի գրելակերպը իր բանաստեղծութեանց մէջ: Իսկ իր միւս ընկերվարական հակումով գրած մէկ քանի քերթուածները, որոնք կը կոչուին *Մեռնող բանուոր, Խարուած կոյսեր, Դադար, Մայիս մէկ*, և այլն, անշուշտ եւրոպական գրականութեան ճաշակն ու առարկաներն ունին, ֆրանսական եւ պելճ գործատանց ծովսին կծու համը, մինչեւ մեր գեղածիծաղ յոյլ արկերը փոխադրուած, քանի որ մենք գործատուն չունինք դեռ: Բայց Վարուժանի մեծ տաղանդը իրապէս կրցած է մեր աչքին այնքան հարազատ ցուցնել բոլոր այս տեսարաններին ու անոնց տակ թաքնուած ցաւերը, այնքա՛ն հարազատ թերեւս որքան հարազատ են իր հայրենաբաղձ շինականի արեւոտ շեշտերն ու վճիտ հեծեծմունքը: Իր ճամփորդութիւններն Իտալիա եւ Պելճիքա, աւելի՛ լայնցուցած են իր նիւթերու հորիզոնը եւ իր հայրենաբաղձի զգացումներուն վրայ աւելցուցած են աւելի համամարդկային զգացումներ, որպիսին է ընկերաւորութիւնը որ այնքան պերճախօսներ ու գործողներ որքան բանաստեղծներ ստեղծված է այսօր,– ամէնէն թարմ ու ամէնէն հզօր բանաստեղծութիւնը թերեւս:

Իմաստասիրական տեսակէտով, եթէ կարելի ըլլար այժմէն իսկ վերջին բառը ըսել իր գործին ամբողջական իմաստի մասին, զինքը կը գտնենք գրեթէ միշտ բնապաշտ մը, իսկապէս լաւատես, որ կը հաւատայ լաւագոյն օրերու, եւ մեծ հաւատք ու յարգանք ունի կեանքին մասին: Կենսապաշտ մը, եթէ կ'ուզէք, բառին իմաստասիրական ազնուագոյն առումով, որ բոլոր բնագանցական ճանչցուած բաները կեանքին մէջ միայն պարունակած կը տեսնէ: Աստուած կեանքին մէջ է միայն, եւ երբ կեանքը կը թողունք, կրնա՛նք ըսել Դուրեանին պէս «է՛հ, մնաք բարով, Աստուած եւ արեւ»¹⁹, այս անգամ գիտակցօրէ՛ն, առանց վայրենահանճար բանաստեղծին շփոթուն տարտամ խոռովքին: